


891-99  
h-75



\* 8 NOV 2017

# ՀԱՅՈՎԵՐԻ ԱՂՋԻՒԹԻՑ

ԲԱՍԱՏԵՂՋՈՒԹԻՒՆՆԵՐ

Օր. ԲԱՄԱԿԵԱՆ

891.99  
Ի-75

responsible first

31-99  
-75

Mr. Joualaffy:



Mr. Joualaffy:

ՀԱՅԹՎԻ ԱՂԵԿԵՔՑ

1920

29 APR 2013

32982

31-99

75



այրենի աղբի'ւր,  
Երգերս վճիտ  
Հիւսել կուգայի  
Բիւրեղ կարկաջիդ:

Ես հիմա այնպէ՞ս  
Յոգնած եմ ու լուռ,—  
Դո՞ւ յաւէրժ կ'երգես,  
Հայրենի աղբի՛ւր...




1260 - 84



Ո՞րտեղ է ընկած  
Այն ժարը հիմի,  
Որ հողիս վրայ  
Շիրիմ պիտ' լինի:

Իմ քափառ կեանիում,  
Մարդ ի՞նչ իմանայ,  
Չեմ նստել, քախծել  
Այդ ժարի վրայ . . .



\* \* \*

Անգիր, Ե՛ւ անյայտ, Ե՛ւ անյիշտակ՝  
Ամայի դաշտում մի գերեզման կայ.—  
Ո՞վ է հող դառնում այդ լուռ ժարի տակ,  
Ո՞վ է լաց եղել այդ ժարի վրայ :

Համբ ժայլերով դարերն են անցնում,  
Արտոյտն երգում է իր գովքը գարնան.  
Շուրջը ոսկեղեն արտերն են ծփում,—  
Ո՞վ է երազել եւ սիրել նրան . . .



\* \* \*

Քո ունիքերդ, իմ սիրեկա՞ն,  
Կեռ են դահնի քրի նման:

Աշխարհը՝ սուտ, երազ ու սին,  
Թո՞ղ որ խմեմ, իմ սիրեկա՞ն,  
Շրբունիքնիդ կարմիր գինին,—  
Գլուխս զա՞րկ դահնի նման...

Քո ունիքերդ, իմ սիրեկա՞ն,  
Կեռ են դահնի քրի նման...

\* \* \*

Զիւն է գալիս, ու քախծալիք  
Ծածկում դաշտերն ամայի.—  
Քնիքն է, քնիքն է ինձ սիրեկիք,  
Ու նոր մեռած լինեի...

Գուրգուրեկի սրտիս սրտում  
Պատկերդ անո՞ւշ ու աղւոր.  
Ու ձիւնը զար մե՞ղմ ու տրսո՞ւմ,  
Ծածկեր շիրիմս հեռաւոր...




Մ Ա Հ Ը

Հայրենի գետի զմրուխտ ափերին  
Մեր հին տնակն է կեն մենաւոր.  
Այս, ես հեռաւոր նանապարհներին  
Քայլում եմ հիմա մենակ ու մոլոր:

Շաշում է ահեղ՝ իմ գլխի վրայ  
Աշնան ցուրտ քամին այս մութ գիշերին.—  
Վառում է արդեօք օճախս հիմա  
Հայրենի գետի զմրուխտ ափերին...



Անտես, անձայն,  
Մի ժարաւան  
Գիշեր ու զօր  
Կ'երբայ, կ'երբայ...  
Ողջ-աշխարքը  
Կը տրորէ,  
Փոշի կանէ,  
Քամուն կուտայ,  
Եւ յափիտեան  
Կ'երբայ, կ'երբայ...



\*\*\*

Ծաղկունքը գարնան  
ինձի սէր բերին:  
  
Ծաղկունքը գարնան  
Սիրուս հետ քօշնան:  
  
Ու շիրմիս վըրէն  
Կը բացւին նորէն  
  
Ծաղկունքը գարնան...



\*\*\*

Ո'չ իշխանութիւն, ո'չ կոխ, ո'չ կին  
Չեն յափշտակում հիւանդ իմ հոգին.  
Դօդանցն է միայն ձիգ ժարաւանի  
Հեռաւո՞ր, անյա՛յտ նանապարհների  
Հրապոյրներով դիւրում իմ հոգին  
Թափառումների տենչով անմեկին...



\*\*\*

Լորիների տակ  
Մտորում եմ լուռ.  
Հեռուն մի ջութակ  
Հեծում է տխուր:

Մութի մէջ, ասես,  
Իմ բախտի վրայ  
Անուշիկ մօր պէս  
Արտասւում է նա:

Անողոք մի ձեռք  
Ծանրացաւ վրաս,  
Փշրեց սէր ու երգ,  
Գարուն ու երազ...

Լորիների տակ  
Մորմոքում եմ լուռ.  
Հետս մի ջութակ  
Լալիս է տխուր...

\*\*\*

Աշո'ւն է, քա'մի...  
Տերեւներն մի-մի,  
Արցունիքի նման  
Դողացին, ընկան...

Փչում է, ասե՛ս,  
Ունայնութեան պէս,  
Քամին ամեհի  
Ճամբում ամայի:

Սմբել է հոգիս  
Մռայլ գիշերիս,—  
Չ'զիտեմ մահից,  
Թէ՞ կեանիք ահից...

Եւ մարմանդ փոշին  
Ելնում է իմ հին  
Ապրած օրերից,  
Եւ ծածկում է ինձ...

\* \* \*


Առաւօտ պահին  
Դալար դաշտերում  
Իմ մանկան հետ  
Պտոյտ եմ անում:

Ծաղիկների հետ  
Խօսում է տղաս,  
Որոնց հետ ես էլ  
Զրոյց եմ արած:

Վայրկեանը՝ ծանը,  
Օրերը՝ թերեւ.  
Տարիներն անցան  
Իրարու ետեւ:

Ու աշխարհն աչքիս  
Դառնում է երազ.  
Երեկ ես էի,  
Այսօր՝ երեխաս:

Եւ վաղը, ասես,  
Մի աչք մքազնած  
Լուր գերեզմանից  
Նայում է վրաս...



Գետակի վրայ  
Թե բար է ուռին.  
Ու նայում է լուռ  
Վազող ջրերին:

... Երազ-աշխարհում  
Ամէն բան յաւետ  
Գալիս է, զնում,  
Ու ցնում անհետ:

16  
17

Եւ գլուխը կախ՝  
Նս լաց է լինում.—  
Զրերը ուրախ՝  
Գալիս են, զնում...



\* \* \*

Գիշե՛ր, ժամի՛.  
 Բաց լուսամուտէս  
 Փոշի կը մաղլի  
 Մուք սենեկիս մէջ...  
 Հիւանդ ու մինակ  
 Պառկած եմ մահնում.  
 Բարձս գլխիս տակ—  
 Կրակ վառվուն:  
 Դուրսը, չ'զիտեմ,  
 Անձրեւ է զալիս,  
 Թէ՞ գլխիս վերեւ  
 Խեղճ մայրս է լսլիս...  
 Ու դողդոց մի ձեռք  
 Ինձ կը քւայ քէ՝  
 Դալուկ երեսիս  
 Հող կը քափքփէ...

\* \* \*

Երազիս տեսայ՝ օրօ՛ր ու շորո՛ր  
 Քարւան էր անցնում զնգալով անո՛ւշ.  
 Սարերի փեշով ոլո՛ր ու մոլո՛ր  
 Քարւանն էր անցնում զնգալով անո՛ւշ:

Նազելիս տեսայ ուրա՛խ, շողշողո՛ւն,  
 Հարսի քողերով, ոսկի շորերով.  
 Ու ոտքերն ընկայ կարօտով գեղուն,  
 Ս՛խ, ժարւանն անցաւ սրտիս վրայով:

Ճամբու փոշու մէջ անտէրո՛ւնչ, անտէ՛ր,  
 Ընկած էի ես ջարդւա՛ծ ու անյո՛յս.  
 Ու հեռումերից լսում էի դեռ  
 Անցած ժարւանի դօղանջը անո՛ւշ...



\*\*\*

Ծաղիկ էի նորաբողբոջ,  
Սարի լանջում, երկնի տակ.  
Ինձ կը դիւք-էր առւի խոխոջ,  
Ինձ կ'ողջունէր արեգակ:

Գիշերները՝ աստղ ու լուսին  
Վար կ'իջնէին երկնիքն,  
Որ հեքեաթներ ինձ ասէին  
Կախարդական, ոսկեղէն:

Գառների հետ լուսածագին  
Եկար սարը, ջա՞ն աղջիկ,  
Ինձ քաղեցիր, դրիր անգին  
Կրծքիդ վրայ գեղեցիկ:

Այնտեղ շքեղ՝ ես ապրեցայ  
Երազներով երջանիկ.  
Սիրու դաւեց ինձ, սեւաչեա՛յ, —  
Ես չորացայ, ա՛յս, աղջիկ...



\*\*\*

Այս, ես սիրու նամբի ափում  
Մենակ բուսած վայրի վարդ եմ.  
Անց ու դարձի փոշին ծփուն  
Վերաս իջած, կորած վարդ եմ:

Սիրունները պայտեզների  
Քննուշ պահած վարդն են սիրում.  
Ես հուր-վարդն եմ ժեռ սարերի՝  
Սկըս հասած արեւներում:

Անց ու դարձող ինձ չի նայիր,  
Իսկ ես սիրու ծով-ծարաւ եմ.  
Ծարաւ սիրտս բուսցուց վշեր, —  
Հիմա չար եմ ու նախանձ եմ...



\* \* \*

Ծաղիկ էի նորաբողբոչ,  
Սարի լամջում, երկնի տակ.  
Ինձ կը դիւք-էր առուի խոխոչ,  
Ինձ կ'ողջունէր արեգակ:

Գիշերները՝ աստղ ու լուսին  
Այս կ'իջնելին երկնիքն,  
Որ հէֆեաքներ ինձ ասէին  
Կախարդական, ոսկելին:

Գառների հետ լուսածագին  
Եկար սարը, զան աղջիկ,  
Ինձ քաղեցիր, դրիր անգին  
Կրծքիդ վրայ գեղեցիկ:

Այնտեղ շքեղ՝ ես ապրեցայ  
Երազներով երջանիկ.  
Միրտդ դաւեց ինձ, սեւաչեա՛յ,—  
Ես չորացայ, այս, աղջիկ...



\* \* \*

Այս, ես սիրու նամբի ափում  
Մենակ բուսած վայրի վարդ եմ.  
Անց ու դարձի փոշին ծփուն  
Վերաս իջած, կորած վարդ եմ:

Սիրունները սլարտեզների  
Քնիուշ պահած վարդն են սիրում.  
Ես հուր-վարդն եմ ժեռ սարերի՝  
Սէրս հասած արեւներում:

Անց ու դարձող ինձ չի նայիր,  
Իսկ ես սիրու ծով-ծարաւ եմ.  
Ծարաւ սիրտս բուսցուց վշեր,—  
Հիմա չար եմ ու նախանձ եմ...



\* \* \*

Թո կարօտած հայրենիքի  
Սուենու պէս՝ պլացիկ.  
Մազեր ունիս ոսկի-հասկի,  
Ու աչերդ՝ մեղեսիկ:

Դու կը սիրես մարգարիտներ,  
Եւ աղամանդը կ'ասես.  
Պարանոցիդ ինչ է վայել,  
Թէեւ մանուկ, լա՛ւ զիտես...

Երբ շրբունիքով երազարոյք  
Մեղմ կը հպիս շրբունիքս.  
Աշխ, ասես թէ՝ մի կոշտ ու կուռ  
Չեռք կը դիպչի բաց վերքիս:

Ու մի քախիծ յոնժոռադէմ  
Ինձ կը պատէ՝ սեւ ու մուր.—  
Ես յոգնած եմ, ես հիւանդ եմ,  
Դու՝ ոսկեղին մի արտուր...



\* \* \*

Կը տեսնեմ ահա,— լուռ երեկոյին  
Բարակ ծուխ կ'ելնի իմ հօր օնախէն.  
Եւ ուռիներս մարմանդ կ'օրօրւին,  
Ծղրիդը կ'երգէ անտես խորշերէն...

Մեղմ նրազի տակ նստել է տխուր,  
Ծերունի մայրս՝ մանկիկս զրկին,—  
Մուշ-մուշ քնիլ է մանկիկս՝ անդորր.  
Ու աղօք-ք կ'անէ մայրիկս՝ լոին.—

«Ամենէն առաջ քո՛ղ ինքը հասնի,  
Ամէն հիւանդի, հեռո՛ւ նամբորդի.  
Ամենէն յետոյ քո՛ղ ինքը հասնի  
Քե՛զ, իմ խեղն որդի՛, իմ պանդուխտ որդի՛»:

Անո՛ւշ ծուխ կ'ելնի իմ հօր օնախէն,  
Մոյրս կ'աղօք-է՝ մանկիկս զրկին.  
Ծղրիդը կ'երգէ անտես խորշերէն  
Եւ ուռիներս մարմանդ կ'օրօրւին...



\*\*\*

Ամէն գարունին՝  
Արագիլն ուրախ կ'իջնէր մեր ծառին.  
Մանուկ ականջիս բարձրիկ կը կանչէր,—  
«Դուրս արի խաղանիք, ծաղիկ եմ բերեր»:

Ամէն գարունին՝  
Արագիլն ուրախ կ'իջնէր մեր ծառին.  
Պատաճի սրտիս բարձրիկ կը կանչէր,—  
«Դուրս արի բռչինք, երազ եմ բերեր»:


Ամէն գարունին՝  
Արագիլն ուրախ կ'իջնի մեր ծառին.  
Ու նորէն կ'երբայ, ու նորէն կուգայ,  
Բայց, ա՛խ, ինձ համար էլ երազ չ'կայ...

\*\*\*

Ոսկի թիթեռներ — ոսկեհուր աստղե՛ր,  
Ծով Մարմարայի — լուսեղէն անուրջ.  
Գինով գիշերնե՛ր, լուսնի վառ շողե՛ր,  
Մոյզ նոնիների դիւրական մրմունչ...

Յուշերը նորից սիրտս են տանջում,  
Լուսեղէն երա՛զ, որ հիմա չ'կայ.  
Հոգիս մենաւոր, վաստակած թռչուն  
Խաւար ու խորին ծովերի վրայ...

Մի երգ գիտէի՝ անուշ, ոսկեշունչ,  
Լուսեղէն երազ՝ հեռու, հեռաւո՞ր.  
Ա՛յս, նոնիների դիւրական մրմունչ,  
Օրօքէ՛ֆ մեղմիկ հոգիս վիրաւոր...



\* \* \*

Կեռասենու նիւղքերին երկու քոչուն գարունիքին  
կը խօսէին անուշիկ, ու մէկն ասաւ այն մէկին.  
— «Ծի՛ւ-ծի՛ւ, սիրուն սիրունիկ, ես քեզ տեսայ, երբ դու նո՞ր՝  
Մայրիկիդ հետ քեւ ելած՝ կը քոչէիր սար ու ձոր.  
Այն օրւանին իմ սիրտը քննուշ քեւիդ հետ տարար...»  
— Ծի՛ւ-ծի՛ւ, խօսեց միւսը, բայց ես քեզի չեմ նանչնար.  
Միայն ձայնոք է, վաղուց ձանօք, բարեկամ,  
Լսած լինիմ, ասես թէ՛ երազիս մէջ մանկական:  
— Ծի՛ւ-ծի՛ւ, ասաւ մէկէլը, այդ խեղն սիրտս է, իմ անո՞ւ,  
Որ շէմֆիդ տակ կուչ եկած՝ սէրս կ'երգէ մինչեւ լոյս...  
— Ծի՛ւ-ծի՛ւ, հնչեց միւսը, ու պատասխան չ'տալով՝  
Քննուշ կտցեց մի կեռաս քելիկ-մելիկ նազանինով:  
— Ծի՛ւ-ծի՛ւ, խօսեց մէկէլը, ես քեզ վաղուց կը սիրեմ,  
Թո՞ղ որ քոչիմ մօտիկդ, տոտիկներդ համբուրեմ.  
Թեւդ ճգէ իմ քեւին, քոչինք, երբանիք հեռունե՛ր.  
Ես տեսել եմ, ես գիտեմ հեռուն ոսկի աշխարհներ,  
Ուր ո՞չ մարդ կայ, ո՞չ ուրուր,— տարի բոլոր վառ գարուն,  
Լոյս-աղբիւրներ շողշողուն, զառ պարտէզներ դալարուն.

Այնտեղ շինենիք մեր բոյնը, երգենիք մեր սէրն ու կարօւ...»  
Ու իր տեղէն քիու առաւ, քուա նստաւ նրա մօս:  
Խսկ միւսը լուռ ու մունջ, քելիկ-մելիկ նազանինով  
Քննուշ կտցեց մի կեռաս, աշքի ծայրով նայելով...  
Մէկէլ... իրար քեւ-քեւի, անո՞ւշ-անո՞ւշ ծլվլան՝  
Ծափիկ տւին ու քոա՞ն, ծափիկ տւին ու քոա՞ն...



Կ Տ Ա Կ

Սիրուն մանկի'կ, ես գնում եմ, դու գալիս ես այս աշխարհ.  
 Ճշմարիտն ես փորձով գիտեմ, ու խօսերս մի՛ մոռնար:  
 Կեանքն է փախչող, խաբուսիկ թեւ, վայրկեանն է միշտ իրական.  
 Բախտի կուանը կամքն է թեւ, բայց դիպւածն է տիրական:  
 Զգացմունքն է գերիշխանը, խելքը՝ նորա լոկ ծառան.  
 Բայց դո՛ւ խելքդ վրադ պահի՛ր, ինչպէս պողպատ կուռ վահան:  
 Մի՛ հաւատար ստերներին, յենւի՛ր միայն ֆեզ վրայ,  
 Ասելու չափ սիրի՛ր մարդկանց, բայց լաւութիւն միշտ արա':  
 Եւ լայն օրում թէ՛ ընկերներ, թէ՛ բարեկամ նանաչի՛ր.  
 Իսկ նեղ օրում ընկերների ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր:  
 Խաղերով լի այս աշխարհում խաղդ եթէ տանուլ տաս,  
 Զւարք եղի՛ր, ու այդպիսով բախտի վրայ կը խնդաս:  
Անվախ ու վեհ դեկդ վարէ անձանօթին դէմ-դէմի.  
Անզզալի առաջ գնա՛, ինչ որ լինի՛, թո՞ղ լինի:  
 Լսի՛ր, տղա՛ս, ինձ կ'թաղես անյայտ մի տեղ, աննշան,  
 Որ չիմանան, մարդիկ չ'գան' շիրմիս ժարը գողանան:



\* \* \*

Լա'ց, իմ նազելիս, լա'ց դա՛ռն ու անհո՛ւն,  
 Աշխարհի վերքին ըլ կայ դեղ-դարման.  
 Ի՞նչ է մեր կեանքը — բոց մի փայլփուն,  
 Հողմերի առջեւ ահեղ բնութեան:

Ե՛ւ սէր ու երգեր, Ե՛ւ փառք ու հանճար  
 Սին պատրանքներ են մահը մոռնալու.  
 Եւ մարդը՝ դժբախտ, անգօր ու անճար,  
 Ծնւած է մահին պատառ դառնալու:

Յաւիտենական, անծիր, անսահման  
 Խաւարների մէջ, կեա'նի, դու ես մի լոյս,  
 Որ պիտի շողաս, մարիս յաւիտեան,—  
 Լա'ց, իմ նազելիս, լա'ց դա՛ռն ու անյո՛յս:

Իմ սիրտը՝ նման բացւած խոր վերքի,  
 Որ տիեզերական կոկիծն է լալիս.  
 Լալիս է դարեր առանց արցունիքի,—  
 Ա՛յս, հեզ գլուխդ դի՛ր վշտոտ կրծքիս:

Դի՛ր անյոյս սրտիս գլուխդ ու լա'ց,  
 Ամէնիքի բախտը լա'ց, իմ նազելի՛ս.  
 Լա'ց, -- եւ արցունիքդ դեռ չ'ցամաքած՝  
 Դուռդ կը բաղխէ մահը, նազելի՛ս...

## II

Մաղում է անձրեւ՝  
Սրտամա՛շ, տրտո՛ւմ.  
Անձրե՛ւ ու անձրե՛ւ,  
Դանդա՛ղ, անդադրո՛ւմ:

Ա՛յս, հիմի, հիմի  
Ի՞նչ ցուրտ է ու քաց  
Մութում քն շիրմի,  
Իմ սրտիս սիրա՛ծ...


Հոգուս մէջ դարձար  
Դու մի այրող վէրք.  
Ես քեզ մոռանալ  
Չեմ կարող երբե՛ք:

Ու աշնան մէգում  
Կանգնել եմ անյոյս  
Անյոյս հեկեկում  
Անունդ անո՛ւշ...



ԻՍՍՀԱԿ ԻՍՍՀԱԿԵՍՆԻ  
Նվիրական յիշատակին

## I



Ծառիս վրայ մի գորշ քոչուն՝  
Կոռուցն առած քեւի տակ՝  
Կուչ է եկել ու հառաչում,  
Ա՛յնպէս տխուր ու անյոյս,  
Ասես, առել բերել է ինձ  
Վերջին խօսքը սիրելոյս...  
  
Ու լսում եմ խօսքը տրտում՝  
Սրտիցս արին է կարում...

III

Աչքս նամբիդ ծովացած՝  
Կարօտդ սիրտս էր այրում.  
Այցի եկար դու յանկարծ  
Ինձ այս օտար աշխարհում:

Դեմքդ քննուշ ժպիտով,  
Ինչպէս մանուկ երեկուայ,  
Գիրկս ընկար կարօտով,  
Իմ անուշիկ երեխա'յ...

Այդ ի՞նչքան ես մեծացել,  
Պարքեւական ի՞նչ հասակ.  
Ի՞նչ շեղ ես, գեղեցիկ,  
Գարնան կանաչ արեգակ...

Յաղթանակից ես եկել,  
Ոսկեզրահ, քաջաճի.  
Ա՛յս, քեզ շա'տ եմ կարօտցել,  
Մօտս կեցի', մի' դարձի...

Սուր է, հոգի'ս, քէ հիմի,  
Մարմարէ ձիւնն է ծածկում  
Հողաքումբը քո շիրմի.—  
Դուն իմ մօտս ես, իմ գրկում:

Ճակտիդ վրայ, աստղի պէս,  
Պստի'կ, պստի'կ մի վերք կայ.  
Թո'դ համբուրեմ' լաւանայ,  
Դուն իմ կորին երեխա'յ...





\* \* \*

Դառն ու տրոռում  
Օք ու գիշեր·  
իմ հեգ սրտում  
Անյոյս վշտեր:

Հայրենի տուն·  
Աւար, աւեր·  
Արփ'ւն, արփ'ւն,  
Անհուն ցաւեր:

Սուրբ մանկիկներ,  
Մեր մայր ու քոյլը  
Հրին, ջրին  
Ու սրին կուր:


Կսկի՛ծ, կսկի՛ծ,  
Ա՛յսքան կսկի՛ծ.  
Ի՞նչպէս տանիմ  
Ա՛յսքան կսկի՛ծ...



\* \* \*

Ցերեկւայ ոսկի լոյսերը մեռան,  
Ծածկել է քեւը մթին լոռոքեան  
Անտառ, լեռ ու ձոր:  
Քնել են անդորր՝  
Ուղիներ փոշոտ, կամուրջ, սայլատակ  
Անդուլ ծեծկւած կուռ ոտների տակ...

Սակայն մի հառաչ խորունկ, սրտազին՝  
Լսում եմ անքուն՝ ամէն գիշերին  
Հեռու մի տեղից.  
— Քո խոցւած կրծքից,  
Իմ սուրբ հայրենիք՝ անարատ զոհի,  
Վեհ զաղափարի, պայքարի, մահի.—  
Խօսում ես յաւես  
Աստւածուքեան հետ...



\*\*\*

Հայոց գեղջուկի ծաւալուն արտե՛ր,  
Աւետարանի էջերի նման  
Խնկաբո՛յր, օծո՛ւն, յաւէ՛րժ սրբազան,  
Թշնամու սրով հասկաբեկ արտե՛ր:

Իռպան մնացի՛ անտէր, ամայի,  
Ակոսներիդ մէջ մոքքեց մանկալին,  
Մանուկ հօտաղին, անխննիզ ամոլին  
Դարերի դժխնմ ոսոխն ամեհի:

Հայոց գեղջուկնե՛ր, եղբայրնե՛ր հոգո՛ւս,  
Չեր արիւնազանգ արտերի վրայ  
Դրախտի փառքով պիտի հուրիրայ  
Մեր ազատութեան ոսկի արշալոյս:

Դո՛ւֆ էֆ այսօրւան մեր դառն լացը,  
Սուրբ նահատակներ Աստծոյ սեղանի,  
Դո՛ւֆ, անմահ սերմեր մեռնող ցորենի,  
Դո՛ւֆ էֆ վաղորդեան մեր արդար հացը.—

Հայոց գեղջուկնե՛ր, եղբայրնե՛ր հոգուս...



## ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ

I

Եկաւ հապճեապ սուրհանդակ՝ փոշիների մէջ թարաւ,  
Ուրարտուի արքայի առջեւ խոնարի ծունը իջաւ.  
— «Որդի՛ հզօր Խալդիի, տէր գետերին Նահիրիի,  
Խնձ առաքեց բդեշլոր քո այն հեռու աշխարհի,  
Ուր արեւն է մայր մտնում:

Յաղբո՛ղ գոռող Ասուրի,  
Մի թշնամի, որ նման մքնում փայլող մի սուրի,  
Մյորնել է մեր կողը, եւ բանդելով բուրգ-պատւար՝  
Ներս է խուժում մեր հողը, հեղեղների պէս վարար:  
Զենի իմանում, չ'գիտենին նրանց տոհմը, ո՞վ էր են,  
Ո՞վ է նրանց Ասուրածը, նրանց լեզուն, ո՞ւսկից են.  
Եւ մրդիկն են սանձել թէ՞ արծիւը ամպերի,  
Նրանց ձիերը թռչում են պատնէներով բերդերի»...

Սարդուրիսի նակատին մոայլ վիհեր բացւեցին.  
Եւ արձակեց հրաման Ուրարտական թագերին.  
Կազմեց ամուր այրումի, կազմեց բանակ մեծառյժ,  
Եւ մեկնեցին ոազմադաշտ թշնամու դէմ խուժադուժ...

## II

Գամերք, Մոսոն ու Թափալ ծունկ են իջել զլխահակ՝  
Յաղթողներին բերելով հարկ ու ընծայ անժանակ.—  
Տորեն, մեղք ու երկաք, իրենց չքնաղ կոյսերը,  
Որոնց միայն գգւել են երկնի մաքուր հովերը:  
Նետեր ունին սայրասուր եւ աղեղներ լայնալին,  
Որ արծւին սրտախոց վայր են բերում երկնից:  
Պարսեր ունին ամեհի, սուրեր ունին կուռ-կոպւած՝  
Կայծակների ամպեղէն դարբնցում ջրդեղւած:  
Փոխւգական գտակներ եւ գոտիներ երկարի,  
Եւ վիթխարի ուսերին վագրների վառ մորքի,  
Որոնց բռնել են շտապ իրենց անցած վայրերում:  
Եւ նակատներն արեւառ՝ ինչպէս կաւը քուրայում:  
Վաչէների մէջ կորիւն՝ ժիր մանուկներ ոսկեհեր,  
Բազուկները ջլապինդ, աչիկները՝ արեւներ:  
Եւ նրանց հետ ալեհեր, եւ իմաստուն ծեր պապեր՝  
Պիրկ ձեռներին զինով լի էտրուրական սափորներ:  
Վիթի նման աղջիկներ՝ գարունիւայ պէս բռնկւած՝  
Զրահի տակ ստիճեր՝ սէրն ու կարօտ անքեղած.  
Եւ մայրերը սիրաշատ ու նրանց սուրբ արգանդում  
Կեանին է անում, ինչպէս որ վիշապաձագն անդնդում:

## III

Ինչպէս ծովը դուրս պոռք-կայ իր վիհերից անպարփակ  
Յորձանիներ տայ եւ յորդի, որոնելով նոր յատակ,  
Այնպէս յորդում է առաջ նրանց արշաւն ահաւոր,  
Որոնելու նոր աշխարհ, իրենց երդի համար նոր:  
Եւ յորդում են եւ նրանց խօլ բարբառից սարսափուն  
Վարազներն են թաքքաֆում շամբուտների գուքերում:  
Եւ յորդում են, եւ հարքում նժոյզների ոտքի տակ  
Խոչեր-խութեր ու լեռներ, ազգեր-ցեղեր ու բանակ.  
Եւ նրանց վերեւ յածում է սալաւարտով պղնձի՝  
Նահապետը, քաջ Գեստրաս, ինչպէս արեւ քաջաձի:

Եկաւ արքան Սարդուրիս, եւ արքաներն Նահիրիի  
Ոստխի դէմ ամենի, հեռո՞ւ, անյայտ աշխարհի.  
Երկաթեղին պատերով պատւար կեցան դարձդար,  
Եւ սուր սրի զարկեցին, նակատ նակտի անդադար.  
Սերունդ իջաւ գերեզման, սերունդ ելաւ օրօցից,  
Եւ կոեցին նոր սուսեր, պայքարեցին նոր-նորից.  
Ճակատ նակտի բաղխեցին եւ սուր սրի զարկեցին,  
Ճակատ նակտի բաղխեցին եւ սուր սրի զարկեցին.  
Փշրւեցին նետ ու սուր, Ռւրարտուի այրուձին,  
Եւ նորեկներն յաղթապանծ՝ կուռ պատերը նեղքեցին.

Ռազմիկները Խալդերի փախան պարտւած ու նւաստ՝  
Թողած բալիշ ու աւար իրենց հողը հացաշատ,  
Ոստանները ոսկեղուռ, իրենց կիներն սեւաչւի,  
Փախան մինչեւ ծովածեծ կողալանջերն Կաւկասի:

Եւ վաչերը շառաչուն՝ յաղթողների կանգ առան  
Այրարատեան դաշտի մէջ, Մասիսների յանդիման.  
Գեստրասները կախեցին վահանն իրենց պողպատի  
Ադամանդից լուսեղին Աւագ-Մասսայ նակատի:  
Հիմ դրեցին, վառեցին իրենց երդը սրբազն,  
Եւ ծուխն ելաւ ու փուեց գետերն ի վար Նահիրեան.  
Եւ բազինը կանգնեցին իրենց արեւ-Աստծու՝  
Քաջ Վահագնի, բաշխչչը յաղթանակի եւ գինու.  
Եւ Աստղիկի, բամբիշը Վիշապաբաղ Վահագնի,  
Աստւածուին գեղեցկի, հզօր սիրոյ եւ կեանի:

Եղան նրանի քաջ պետեր—Հայեր սեպուհ, յաղթական,  
Աշխարհն եղաւ Հայաստան եւ պիտ' մնայ Հայաստան՝  
Մինչեւ արեւը հանգչի եւ ցուրտ անիւնը նրա  
Զիւնի համայն ազգերի հայրենիքների վրայ...



Եկաւ արքան Սարդուրիս, եւ արքաներն Նահիրիի  
Ոստխի դէմ ամեհի, հեռո՛ւ, անյայտ աշխարհի.  
Երկար-եղին պատերով պատւար՝ կեցան դարձդար,  
Եւ սուր սրի զարկեցին, նակատ նակտի անդադար.  
Սերունդ իջաւ գերեզման, սերունդ ելաւ օրօցից,  
Եւ կոնցին նոր սուսեր, պայքարեցին նոր-նորից.  
Ճակատ նակտի բաղյսեցին եւ սուր սրի զարկեցին,  
Ճակատ նակտի բաղյսեցին եւ սուր սրի զարկեցին.  
Փշրւեցին նետ ու սուր, Ռւրարտուի այրուձին,  
Եւ նորեկներն յաղթապանձ՝ կուռ պատերը նեղեցին.


Ռազմիկները Խալդերի փախան պարտւած ու նւաստ՝  
Թողած բալիշ ու աւար իրենց հողը հացաշատ,  
Ռստանները ոսկեդուռ, իրենց կիներն սեւաչի,  
Փախան մինչեւ ծովածեծ կողալանցերն Կաւկասի:

Եւ վաչերը շառաչուն՝ յաղթողների կանգ առան  
Այրարատեան դաշտի մէջ, Մասիսների յանդիման.  
Գեստրասները կախեցին վահանն իրենց պողպատի  
Աղամանդից լուսեղին Աւագ-Մասսայ ճակատի:  
Ճիմ դրեցին, վառեցին իրենց երդը սրբազն,  
Եւ ծուխն ելաւ ու փուեց գետերն ի վար Նահիրեան.  
Եւ բազինը կանգնեցին իրենց արեւ-Աստծու՝  
Քաջ Վահագնի, բաշխիչը յաղթամակի եւ գինու.  
Եւ Աստղիկի, բամբիշը Վիշապաբաղ Վահագնի,  
Աստւածուիկի գեղեցկի, հզօր սիրոյ եւ կեանքի:

Եղան նրանիք քաջ պետեր—Հայեր սեպուհ, յաղթական,  
Աշխարհն եղաւ Հայաստան եւ պիտ' մնայ Հայաստան՝  
Մինչեւ արեւը հանգչի եւ ցուրտ անիւնը նրա  
Զիւնէ համայն ազգերի հայրենիքների վրայ... .



## ԱՍՊԵՏԻ ՍԵՐԸ



Հին ժամանակ իր ամրոցում ոսկեղին  
Կը բնակւէր հուր ու իրաշք մի աղջիկ.  
Ու կ'ապասէր, որ հեռաւոր տեղերէն  
Իր երազի ասպետը գար գեղեցիկ։

Եւ ձին հեծած, բանակներով յաղքազէն,  
Եկաւ մի օր կանանչ-կտրին մի իշխան.  
Սանձը ճգեց, ու քար կտրեց հիացքէն՝  
Երբ որ տեսաւ պատշգամբում աղջկան։

— «Հրաշք-աղջիկ, քագաւորիս զօրքերով  
Կէս-աշխարհը դրօշակիս տակն առայ.  
Քեզ սիրեցի, սիրով տուր ինձ, քու սիրով  
Միւս կէսն էլ տիրեմ, բերեմ քեզ ընծայ։

— Այդ ի՞նչ սէր է, ասաց աղջիկն ասպետին,  
Քաջ ես գիտե՞մ, գիտե՞մ, չ'կայ քեզ նման.  
Դու կարող ես տիրել արար-աշխարհին,  
Բայց այդ երբէ՛ք հզօր սիրու չէ՛ նշան։

— Ի՞նչպէս յայտնեմ սրտիս հուրը, նազելի՛ս,  
Կուգե՞ս պատուեմ կուրծքս հիմա այս սրով,  
Ոտներիդ տակ նետեմ սիրոս սիրով լի,  
Մեռնիմ ուրախ ու բախտաւոր՝ քու սիրով։

— Այդ չէ սէրը, ասաց աղջիկն ասպետին,  
Գիտե՞մ, քաջ ես, բայց շա՞տ վախկոտ, քոյլեր կան,  
Որ յուսահատ՝ քաջի նման կը մեռնին,  
Բայց այդ երբէ՛ք անշէջ սիրու չէ նշան։

Ու կտրինը մնաց մոլոր ու շւար,  
Աչքերն հանգած՝ լոյս-երեսին աղջկայ.  
— Ի՞նչ որ կուզես, ասա՝ անեմ քեզ համար,  
Արեւի տակ իմ սիրուս պէս սէր չ'կայ:  
  
— Թէ կը սիրես, քո՛ղ ինձ հիմա ու գնա՛,  
Ու ականջ դի՛ր, մի օր դուռդ կը բախեմ:  
Այսպէս ասաց, ու իր ծոցէն մարմարեայ  
Նետեց նրան մի հատիկ վարդ հրեղէն:


Ասպետն առաւ վարդը, քննո՛ւշ համբուրեց,  
Վերջին անգամ նայեց, նայեց սիրածին.  
Սիրու վարդը պահեց այրուղ ծոցի մէջ.  
Ու խթանեց ու սլացաւ նժոյգ-ձին:

Եւ նատել է ամրոցի մէջ մէն-մէնի,  
Այն իշխանը երազներում երջանիկ.  
Վարդը ծոցում, ու ականջը մի ձենի,—  
Եւ քեւ առան, քռան օրեր ու տարիք:

Աչքերը գոց՝ պատած ոսկի մշուշով,  
Ուր կը ժպտար սէր-աղջիկը աննման,  
Քաջ ասպետը բոց կարօտով, լի յոյսով,  
Սիրու ձենի՝ լուռ սպասեց աղջկան...

Եւ քեւ առան, քռան օրեր ու տարիք,  
Վառ կտրինը դարձաւ դողդոջ մի ծերուկ.  
Ու երբ մահը դուռը բախեց զարհուրիկ,  
Հանեց ծոցէն վարդը խամրած ու դալուկ:

Սիրու վարդը աչքին դրեց փափառվ,  
Ու համբուրեց վերջին անգամ, ու մեռաւ  
Հոգին լցւած բլրուկների երգերով.—  
Եւ զրոյցս էլ ա'յսպէս տխուր վերջացաւ...



### ՅԱԻՐԺԱԿԱՆ ՍԵՐԸ

#### I

Լուսակերտ է ապարանիք Թաղմորի,  
Անապատում, որպէս երազ ոսկէհիւս.  
Եօթն հարիւր սիւնի վրայ մարմարի  
Սլամում է աշտարակը երկնասոյզ:

Շուրջը նազուկ արմաւենու պուրակներ,  
Ուր երգում են հրաշֆ-հաւֆեր կարօսով.  
Շատրւաններն հուրիրում են կրակներ,  
Շաղիկները պինազարդում արծաթով:

Գահի վրայ երիտասարդ էլ-Սաման  
Մեղմ զրկել է հրաշագեղ բամբիշին.  
Հիւսիք նրա կրծքի վրայ կը ծփան,  
Հանց նունուֆար լոյս-աղբիւրի երեսին:

## II

Փերուզ ծովը, որ փարում է մշտաքոր  
Սեպ ժայռերը Լիբանանի փէշերի  
Չունի այնպէս, այնպէս փրփուր ձիւնաքոյր,  
Ինչպէս կուրծքը լուսապայծառ բամբիշի:

Արքայական գահի շուրջը գւարքուն  
Մանկաւիկներ եւ նաժիշտներ ոսկեհեր  
Նւազում են, կաֆաւում են ու երգում  
Գիշերները, առաւօտուց մինչ գիշեր:

Երբ հանգչում են ապարանքի զահերը,  
Եւ արծաքեայ կարապի պէս լուսնկան  
Փայփայում է աւազանի զրերը՝  
Շշնչում է սիւզի նման Էլ-Սաման:

Շշնչում է լուսաքաքախ բամբիշի  
Ականջն ի վար այնպէս քնքո'ւշ, հեղասա'հ,  
Ինչպէս լուսնի շողակաքը քաւիշի  
Այն հոյակապ սիւներն ի վար մարմարեայ:

— «Բարձր են երկնի ձեղունները, նազելի'ս,  
Բայց իմ սէրը բարձրաքարձր է նրանցից.  
Խոր են երկրի հիմունները, նազելի'ս,  
Բայց իմ սէրը խորախոր է նրանցից:

Արուսեկը, որ ներկում է ծիրանի  
Ծրբութեաները գառնուկների Տիրոսի,  
Ա'յնքան կարմիր, ա'յնքան կարմիր բոց չունի,  
Ինչքան որ քո համբոյրները սնդուսի:

Կը խորտակւի ապարանիս գեղանի,  
Եւ կը ծածկւի անապատի շնչի տակ.  
Կը բարձրանայ անհուն ծովը Սիդոնի  
Եւ կը գերէ անապատը ծագէ ծագ,

Ժամանակը իր վախճանին կը հասնի,  
Եւ արեւը մի բուռ մոխիր կը դառնայ.  
Բայց իմ սէրը վախճան չունի, հուն չունի,  
Նա յաւէ'քժ է, նա անշէ'ջ է, նա անմահ...»

Զեացնող համբոյրներում դիւք-ական,  
Հանց կինաւուրց հէֆեաք-ական զինու մէջ,  
Թալկանում է, եւ հալչում է Ել-Սաման...  
Ժամանակը դառնում՝ վայրկեան ու յաւէքժ...

Ապարանիքի երենոսեան դոներից  
Երազանուշ մուշկ ու կնդրուկ է բուրում.  
Մանկաւիկներ եւ նաժիշտներ ցնծալից  
Նւազում են ու երգում են ու պարում...

III

Լոռութիւնը մահւան քետով ծւարած՝  
Առկայծում է կանքեղն աղօ'տ, մենաւո՛ր.  
Եւ մեռնում է հեզ բամբիշը դալկացած  
Ել-Սամանի կրծքի վրայ սգաւոր:

Նա մեռնում է, ինչպէս ցողը բողբոջում,  
Մաճկիկն, ինչպէս սուրբ գրկի մէջ մայրական.  
Եւ հծծում է, աղօթ-քի պէս շշնչում  
Հեզ բամբիշի ականջն ի վար Ել-Սաման:

— «Կը խորտակեմ կամարմները երկնային,  
Ես չեմ քողնի, ես չեմ քողնի՝ դու մեռնիս.  
Եւ կը վաճեմ, եւ կը յաղթեմ չար մահին,  
Ես չեմ քողնի, ես չեմ քողնի՝ դու մեռնիս»:

Եւ գրկել է դժգունացող բամբիշին,  
Մահւան հանդեպ սուր ու վահան է շարժում.  
Եւ բամբիշի սառած-մեռած շրբներին  
Իր հրեղէն սէրն ու շունչը ներարկում:

Լուսիններ են եկել-անցել, ու կրկին.  
Մեռած քամբշին ամուր գրկած էլ-Սաման  
Շշնչում է ականջն ի վար մեղմագին,  
Ինչպէս դեղին սիւներն ի վար լուսնկան:

Եւ լֆել են ապարանքը սարսափից  
Մանկլաւիկներ ու նաժիշտներն ոսկեհեր.  
Արմաւներն են լուռ սօսաւում թախծալից,  
Եւ մարել են վառ ծաղիկներն ու ջահեր:

Շատրւաններն հեծկլտում են ու լալիս.  
Եւ սիւնից սիւն սարդը ոստայն է հիւսում.  
Անապատի հողմն է միայն այց գալիս  
Եւ գահի շուրջ կաղկանձում ու փսփում:

Օճն է սրբում սառն ու փայլուն կողերով  
Էլ-Սամանի ոսկորների լուռ փոշին.  
Բայց էլ-Սաման կմախքային ձեռներով  
Պիրկ գրկել է նորից հիւծւած բամիշին:

Եւ քայլայուն ականջն ի վար լոելայն  
Մեռած, սառած շրբունիներով էլ-Սաման  
Շշնչում է յաւերժաբար ու անձայն,  
Ինչպէս խարխուլ սիւներն ի վար լուսնկան:

Պուրակները չորացել են, չքացել,  
Եւ շիշել է լոյս-երազը սիւների.  
Անապատը դեղին քղանցքն է փոել,  
Եւ ծածկել է ապարանքը Թադմորի...

Եւ աւագուտ շիրմի վրայ մենաւոր  
Աշտարակն է մնում կանգուն ու վկայ,  
Որ իմանան վառ աստղերը հեռաւոր  
Էլ-Սամանի սէրը հզօ՞ր ու անմա՞հ:

Որ աշխարհին պատմեն սէրը յաղթապանձ,  
Էլ-Սամանի սէրը՝ անա՞նց, յաւէրժո՞ղ,  
Քարաւաններն ու ճամբորդներն երկիւղած  
Հեռուներից հեռուն եկող-գնացող...

## ՄԱՆԹԱՇԻ ՓԵՐԻՆ

ՊՕԵՄ

ՆԱՐ ԶԱՐՈՅԻ

Անքառամ յիւատակին




ՄԱՆԹԱՇԻ ՓԵՐԻՆ

ԻՄ ԲԱԽՏԻՆ

Էս գիշե՛ր, ամպհով գիշե՛ր,  
Կարօտ աչքիս քուն չի գայ.  
Էս վշտեր, մրմուռ-յուշեր  
Իմ սեւ սրտէս վազ չեն գայ...

Շա՛տ եմ լացել,— իմ աչերէն  
Քունը վաղուց է քռել.  
Շա՛տ եմ լացել, եար, քու սէրէն,  
Սիրտս խոր վէրք է դառել:

Իմ չոր գլո՛ւխ, քուն չունիս,  
Դարդոտ գլո՛ւխ, տուն չունիս,  
Արար-աշխարհ ման կուգաս,  
Սիրած գրկում բուն չունիս...



## ՆԱԽ-ԵՐԳ

Արագածը՝ աստղերի մէջ՝  
Ադամանդի քազը գլխին՝  
Սարերէն վեր, ամպերէն վեր,  
Թիկն է տւել զմրուխտ-գահին:

Սինամ-հաւելի քեւեր ունիմ  
Թռնիմ կերպամ Արագած,  
Ճակտիս աստղէ պասկ ունիմ,  
Սրտիս միջին — զառ երազ:

Սրտիս միջին դրախտ ունիմ,  
Վարդ ու բլբուլ, սէր ու սազ.—  
Արի գիրկս, մարմար Զարօս,  
Թռչինք, երքանք Արագած...

## Ա Ր Ա Գ Ա Ծ Ի Ն

Դուն, Արագա՛ծ, ալմաստ վահան  
Կայծակեղէն քրերի, *Մայ*  
Գագարներդ՝ բիւրեղ վահան  
Թափառական ամպերի:

Սէգ ժայռերդ՝ արծւի բոյն,  
Լճակներդ՝ լոյս-փերուզ.  
Առուներդ՝ մէջֆիդ փայլուն  
Պերն գոտիներ ոսկէհիւս:

Աղբիւրներդ գիշեր ու զօր  
Խօսքի բռնւած իրար հետ,  
Վտակներդ՝ գիլ ու զլոր  
Արբիշումէ փէշերէդ:

Մ Ա Ն Թ Ա Շ Ի Ն

Թիքեռներդ՝ հուր-հրեղէն  
Թոչող-նախրող ծաղիկներ.  
Զառ ու զարմանք երազներէն  
Պոկւած ծւէն-ծւիկներ:

Ծիրանավառ դո'ւն թագուհի,  
Բուրումների դո'ւն աղբիւր,  
Ծաղիկներդ հազար գոյնի,  
Հազար անո'ւն, հազար բոյր:

Է՛յ Մանթաշի երազ-հովի'տ,  
Դո'ւն, զմրուխտէ օրօրն'ց.  
Ծաղիկներդ լուսափթիք՝  
Վերաս մետախս-վառ ծածկոց:

Աղբիւրներդ՝ բիւրեղ զանգեր,  
Հովերդ անուրջ կը բերեն,  
Մոռացումի թովիչ երգեր,  
Հովերդ անուշ կ'օրօրեն:

Հուր-հասֆերդ՝ թեւերն արծաք,  
Կտուցները՝ լալ-մարջան,  
Ինձ կը պատմեն ոսկի հէֆեաք  
Աշխարհներէն դիւթական:

Ա. ԵՐԳ

I

Ալմաստ առուն՝ մօր պէս անքուն՝  
Նանիկ կ'ասէ, օ'ր, օ'ր, օ'ր.  
Անուշ նանին զառ մանկութեան,  
Նանի՛, նանի՛, օ'ր, օ'ր, օ'ր...

Դաշտի գիւղացին կանանչ գարունին  
Հու ու նախիրով սարն է բարձրացել,  
Ու սարի բերրի, բարի լանջերին  
Խրնիք է շինել, վրան է գարկել:

Կորին հովիւներն ու նախրապաններ  
Սուաշներն առած կովերն ու ոչսար՝  
Կը վարեն հեռո՛ւ դալար արօտներ,  
Ու ետ կը բերեն կրելու համար:

Գառնարած տղերք, պստիկ հօտաղներ,  
Սուակի վրայ, մօտիկ ձորակում,  
Կը արածացնեն գառներ ու հորքեր,  
Ու խաղ կը խաղան մինչեւ իրիկուն:

Ժրաշան կանայք, առաւօտուն վաղ,  
Թոնիր կը վառեն, լաւաշ կը թխեն,  
Խնցիները կը շխկան ուրախ,  
Ծաղկի պէս հոտով կարագ կը շինեն:

Արեւամուտին բուխարիկներէն  
Երիկւայ նման խաղաղ ծուխ կ'ելնի.  
Սարւորներն յոգնած՝ սեղան կը նստեն,  
Ու հարհանդ-մարմանդ քուն անո՞ւշ կ'իջնի...

Զառ Մանթաշի ծաղկոտ լանջին  
Պստիկ քողիկդ է կանգնած,  
Թիթեռներին, հովիկներին  
Գիշեր-ցերեկ դուռդ՝ բաց:

Քու գառներդ ուլերիդ հետ  
Դէմդ կուզան վազէվազ.  
Ու կը մայեն քու ետեւէդ  
Երբոր ձորը դուն կ'երքաս.  
Սափորն ուսիդ՝ ծեֆծեքուն  
Երբոր աղբիւր դուն կ'երքաս:

## IV

Շարմաղ Զարօն ձորի միջին  
Վարդ կը փնջէք շողշողուն,  
Ալ-շրբունքին, լալ-շրբունքին  
Մէկէլ նստաւ զառ մեղուն:

«Հանգիստ քող ինձ, նազիկ աղջի՛կ,  
Կը վախենաս քէ կծեմ,  
Քու շրբունքէն լոիկ-մնչիկ  
Անուշ մեղը կը ծծեմ»:

Հուր վարդերէն հարիւր անգամ  
Շրբիդ ալլը բոց ունի.  
Վառ վարդերէն հազար անգամ  
Շրբիդ լալը բոյր ունի,

Վա՛յ ինձ, ինձէն բիւր-բիւր անգամ  
Մեղուն արք ու յարգ ունի...

## III

Արեւի պէս, սիրուն Զարօս,  
Շափաղ տալով դուն կուգաս,  
Էն մուք ձորին, իմ խոր սրտին  
Շողեք տալով դուն կուգաս:

Ալ-վարդերը՝ կրծքիդ վրան,  
Լոյս ցողերը՝ ոտներիդ,  
Հովերի հետ ծամերդ քուան,  
Մեռնիմ քուր-քուր ուներիդ:

Արի՛ մօտս, եղնիկ աղջի՛կ,  
Արար-աշխարհ քո՛ղ արի.  
Նազ մի անիր, նազիդ մատաղ,  
Անսէր սրտէն վազն արի:

## V

Թու նստել ես աղքարա-ակին,  
Շաղը ծամերդ կը քրջէ.  
Նուռ շրբունիդ, նուշ քշերիդ  
Շաղվը ջուրը կը պաչէ:

Թու մագերդ վզիդ բոլոր,  
Վզիդ բոլոր ոլորուն.  
Ինձ արել ես քիքեռ մոլոր,  
Սէրիդ բոլոր մոլորուն:

Թու աչերդ՝ պայծառ աղբխր,  
Ուրկէց սէրդ կը ծագէ,  
Քանի զով երկինք՝ զինջ ու մաքուր,  
Ա՛յս, սիրտս սիրուդ պապակ է:

Զեր քովչանիքին չեմ դիմանայ  
Ծաւի աչե՛ր, ծով-աչե՛ր,  
Սիրտս կ'առնի, սիրտս կուտայ,  
Նուռ պաչ կուզեմ, նուշ պաչե՛ր...

Ու շրբունիդ բաժակ արփր՝  
Ուկեշրած, եաղութով,  
Ինձ խենքի ակս հարբեցրիր  
Սիրու գինով հոգեթով...

Փետուրները պայծառ ոսկով՝  
Հաւքերն ուրախ ծափ կուտան,  
Ու կարօտի, սիրու խօսքով  
Իրար բնիքն ձևն կուտան:

Ճովերն անուշ  
Բոյր կը բերեն  
Դրախտական  
Դաշտերէն...

Վառ հեքեաք է չորս դիս փուած,  
Գինու գետեր կը հոսին,  
Համբոյրներդ զինով վառւած  
Բլրուղի պէս կը խօսին:

Ճողիս հարբած  
Քու համբոյրէն  
Երգս ծփաց  
Ինիքն իրեն...

Եղ համբոյրը, որ ինձ տւիր,  
Էնպէս անուշ-մեղուշ էր.  
Եղպէս պտուղ ծառ ու ծաղիկ,  
Ծով ու ցամաք չէ ծլեր:

Եղ համբոյրէն մի հաս էլ սոն'ը,  
Տանիմ աշխարհս ման տամ.  
Ինչքան դառն սրտեր տեսնեմ  
Տամ, հոտն առնին, անուշնան:

## VIII

Քու աչերդ՝ հրեղէն ծով,—  
Ծովերի պէս մազեր ունիս.  
Սիրտս՝ նաւակ, սէրդ՝ խենք հով,—  
Հովերի պէս նազեր ունիս:

Դուն մի հատիկ  
Աննման,  
Աննմանիդ  
Ո՞վ նման:

Դուն գիշերը՝ վարդի երազ,  
Հոգիս գրկած, վառ հոգիս.  
Դուն ցերեկը՝ ոսկի երազ,  
Իմ գրկի մէջ, նազելին:

Աննմանիդ  
Դու միայն  
Աշխարհիս մէջ  
Դու նման . . .

## IX

ՀԵՇ Արագած, ալ-լալ հազել՝  
Ուր կը քոնիս իմ երգիս պէս.  
Սրտիս խորֆէն ելել-կանգնել  
Երկինք կ'երբաս իմ սիրուս պէս:

Քու լալազար ծիծուն ծաղկունք  
Իմ վարդ սէրէն բոյր կ'առնին.  
Զառ Մանթաշի քեւ ու քոչունք  
Իմ թլրուլէն ձէն կ'առնին,  
ՀԵՇ ջան հա ջան, — ցօղն ու ակունք  
Սրտիս խորֆէն ծին կ'առնին:



Բ. Ե Ր Գ

I

Աղօթքանէն ցոլաց արեւ,  
Սուսան սարի հովն ընկաւ.  
Արտուտն երգով սուրաց վերեւ,  
Շաղաղ վարդի հոտն ընկաւ:

Փրփուր կտրած առուն կուգայ՝  
Այրին, ժայռին ձէն տալով.  
Եղնիկ Զարօն ձորը կուգայ՝  
Ծիլ-ծաղկունանց շողք տալով:

Յետ գնացէ՛ք, քար ու քռայ,  
Վարդե՛ր, ճամբայ ցոյց տւէ՛ք  
Նազան Զարօն մօսս գայ:

Փուշ ու մացա՛ն, մէկդի քաշւէ՛ք,  
Սոռու, փէշերդ գում արա,  
Թռղէ՛ք Զարօն գիրկս գայ:

## II

Ծւար մտած քարերի մէջ  
Սիրամարգներ բիւր-հազար,  
Ասես, իրենց պոչերով պերն  
Զարդարել են դաշտ ու սար:

Ու անտեղեալ մահին-չարին՝  
Հաւքերն ուրախ սէր կ'երգեն.  
Հարբած կ'երգեն իրենց եարին,  
Չեն կշտանար երգելէն:

Լոյս-ծաղկունիքին մեղմ փարւելով,  
Ինչպէս ոսկի լարերին,  
Հովեր կ'անցնին բարակ հեւով,—  
Երազ-երգեր կը լսին:

## III

Թեւս անցած՝ Զարօն սիրուն՝  
Կիշնենիք ձորը Մանթաշի,  
Քնուշ քախիծ լոյս-աշերում՝  
Զարօն անուշ կը խօսի:

— «Նայի՛ր, այնտեղ, դալար զրկում  
Մի լնակ կայ կապտաչեայ.  
Մի ուռենի՛ լալկա՛ն, տրտո՞ւմ,  
Ափի վրայ կը նօնայ:  
Մի սիրահար սիրու կայ քաղւած  
Էղ ծառի տակ մենաւոր.  
Երթանիք այնտեղ, սիրուն տղաս,  
Պատմեմ անցքը սգաւոր...

### ԼՃԱԿԻ ՓԵՐԻՆ

— Լճակի ափին գարունքւայ մի օր  
 Մի հովիւ տղայ նստել է մոլոր.  
 Պարզուկ սրնգով երգել է անուշ,  
 Ու դուրս է ելել մի աղջիկ քնիուշ.  
 Մի հրաշք-աղջիկ՝ մազերը ոսկի,  
 Աչերը խորունկ՝ նման լճակի:  
 Ասել է տղին,— «ա՛յ սիրուն տղայ,  
 Պատկերդ տեսայ ալիքի վրայ,  
 Զրերի տակին ձայնիկդ առայ  
 Ու գերիդ դառայ...  
 Արի քեզ տանեմ, յատակում շքեղ  
 Ես ամրոց ունեմ՝ փերուզ ու բիւրեղ.  
 Սպասիդ կանգնած անհամար ծառայ.  
 Հրեղէն ձիեր՝ զմրուխտէ-զրահ:

Ու իրար գրկում կը խմենի գինի,  
 Մեր անուշ սիրուն մեռնում չի լինի:  
 Արի՝ ինձ պաչէ՛, քեզ շա՛տ կը սիրեմ,  
 Գրկի՛ր ինձ, թէ չէ, տե՛ս, լաց կը լինեմ...»

Ու լինը փերին սուզել է նորէն,  
 Վառւած պատանին նորա ետեւէն...

Մեր մակոյկը հովի հետով  
Երազի պէս կը սահի,  
Ալիքների շուշան թետով  
Լճի վրայ սնդուսի:—  
  
Շրբունիք սաքի զօրք ունի,  
Խելքս գլխէս կը տանի:

---

Ծաղկունանց պէս աստղերն ելան,  
Յնցուղ տւին շողերի,  
Գլուխս դրած ծնկիդ վրան,  
Բոյրը կ'առնեմ աստղերի:—  
  
Լուսնեակն հեզիկ, մա՞նի-մա՞նի,  
Դարդերս հետը կը տանի:

Փունչ ծամերդ ծուփի նման  
Ճակտիս վրայ կը փուփն,  
Ծփծփալէն համբոյր կուտան,  
Ու խենքի պէս կը բռնին:—  
  
Մակոյկն օրօ'ր, նա՞նի-նա՞նի,  
Քունս անո՞ւշ կը տանի...



Գ. ԵՐԳ

I

Երեկոյեան ծաղկուտ սարէն  
Հովիւն հօտը տուն կը բերէ.  
Յոգմած հօտը արօտներէն  
Քնիուշ եարիս քուն կը բերէ:

Էսօր եարս շա՞տ է լսաղցել  
Արեգակի շողերի հետ.  
Արեւի պէս շա՞տ է լսաղցել  
Շող-մատներով իմ սրտի հետ:

Շող մատներով, վարդ-մատներով  
Իմ սրտի հետ շա՞տ է լսաղցել.  
Հիմի յոգմել, եղնիկի պէս,  
Թեւիս տակին կուչ է եկել:

Յոգմած հօտը ծաղիկներէն  
Սիրուն եարիս քուն կը բերէ,  
Սղբիւրների, թիթ-եռների  
Երազներով քուն կը բերէ:

## II

Երկինքն՝ աճամպ, աճուշ լուսին,  
Աստղերի մէջ ման կուգայ.  
Հարօսները սօ'սին-սօսին,  
Հովը հովտում կը հեւայ:

Հաւերն եկան թեւին տալով  
Երամ-երամ իրանց տուն.—  
— Էս ի՞նչ լաւ է, իրարու քով  
Նստինք, խօսինք ես ու դուն:

— Տե՛ս, էն հաւել, ի՞նչ մեղքածոր  
Չէնը ձգեց, Զարօ՛ ջան,  
Քոնի ծորն է ձէնը էնոր,  
Դուն երգդ ասա, սիրո՞ւն ջան...

## III

## ԶԱՐՈՅԻ ԵՐԳԸ

— «Կոպերն իշան լուռ զիշերւայ,  
Սարին, ձորին բերին քուն.  
Դո՞ւն լոյս-արեւ հոգուս վրայ,  
Դո՞ւն միշտ արթուն իմ հոգում:

Քու աչերդ — հուր ու սարի,  
Սիրոս առեր են, տարեր  
Լոյս-աշխարհներ զան հեֆեարի,  
Հեռո՞ւ աստղեր, հեռուներ...

Է՛յ ջան, հազար ինձ երանի,  
Սիրոս թիռ-թիռ կը նախրի,  
Քաղեմ, շարեմ աստղերն երկնի՝  
Քեզի գօտի զոհարի:

Մարմանդ կուզայ քարակ քամի,  
Սէզ ու արօտ իրար կ'անի.  
Թո՛ղ հիւսերս քանդեմ, տղա՛ս,  
Կրծքիդ վրայ թել-թել անի...»

IV

Ու համբուրեց ինձ մեղմով,  
Ա՛յնպէս մեղմով, սիրով լի,  
Ասես, դեմքիս վրայով  
Սահեց թեւը բլրուի...»

## Հ Ե Ք Ե Ա. Թ Ը Ը

— Գլուխդ դի՛ր ուսիս վրայ, նազենի,  
Մի վաղուցւայ հէֆեաք ասեմ, լիս արա.  
— Կ'ընի, չ'ընի, ժամանակով կը լինի  
Մի իշխանի կտրին, մատաղ մի տղայ:  
Օրւայ մէկը իշխանազուն այս տղան  
Ընկերներով որսի ելաւ դաշտ-անտառ,  
Ու զատւելով բռնեց անձուկ մի կածան՝  
Պրպտելով ամէն մի ժար ու մացառ:

— «Երբ փոքր էի, տատիկս ինձի  
Հէֆեաք կ'ասէր, որ քննեմ.  
Քունս չի գայ, հէֆեաք ասա՛,  
Հէֆեաք ասես՝ կը քննեմ...»

Մէկէլ յանկարծ ք-փի տակէն մի եղնիկ  
Դուրս ծլկւեց նետի նման ու ք-ռաւ.  
Ու պուկ եկան քերակները սլացիկ,  
Կտրին տղան արձակեց ձին սրարշաւ:

Խեղն եղնիկը փախաւ մտաւ մի խրճիք,  
Ու երեւաց շեմֆի վրայ մի աղջիկ.  
Ա՛յնիան սիրուն, ա՛յնիան նազիկ ու վնիտ,  
Արշալոյսի ծիրան-ծաղիկ ու շողիկ:

— «Թողած երէն ու եղջերուն սարերի,  
Խեղն եղնիկիս ինչո՞ւ ա՛յսպէս վախ կուտաս:  
— Զբնաղ աղջիկ, դու վհուկ ես քէ՞ փէրի,  
Որ եղնիկով որսկանի սիրտ կը որսաս:  
Ես տղան եմ տէր-իշխանի այս երկրի,  
Զեռքդ տո՛ւր ինձ, հետդ վեր առ եղնիկին,  
Երքանիք հօրս ապարանքը մարմարի.  
Ես՝ քու փեսան, դուն՝ իմ հարսը, իմ անգին:  
Սրտիս վրայ կ'ապրիս բախտով ու գւարք,  
Ու կը հագնիս աստղ ու գոհար զգեստներ.  
Շուրջդ— անուշ շատրւաններ, հազար-վարդ,  
Բլրուկի պէս կը գեղգեղեն նաժիշտներ...

Աղջիկն ասաց, — ի՞նչիս է պէտք գանձ ու զսի.  
Այս սարերի քաջ հովհանի հարսն եմ ես.  
Նորա գրկում միայն երազ ու սէր կայ.  
Ու բագուհի չ'կայ, չունի թագիս պէս..

— Հզօր աղջիկ, քեզ կը սիրեմ, քէ չ'գաս,  
Քեզ կը տանիմ, կը փախցնեմ ես բռնի.  
— Դուն իշխան ես, արա՛, ինչ որ կը ցանկաս,  
Բայց իմացի՛ք, սէրը սիրով կը լինի....:

Տղան խնդրեց ու պաղատեց աղջկան,  
— Ես ծեր հօրս մէկ տղան եմ, մինունք.  
Խղճի արի, ա՛յ դու, անգո՛ւք, աննմա՛ն,  
Ես առանց քեզ խեղի աղքատ եմ, ու աննար:

Աղջիկն հպարտ՝ ու չ'տալով պատասխան  
Սարի դալար արօտները աչք կ'ածէր.—  
Մէկել տղան փչեց փողը որսական,  
Թռան եկան ընկերներն ու ծառաներ:

Տղան ասաց ընկերներին մոլորուն,—  
— Ապարանէս այս խրնիքն է այսուհետ,  
Ու իմ բախտը՝ այս աղջկայ ձեռներում.  
Վերադարձէ ու ձիս տարէք ձերի հետ:  
Իմ վրանս խփէ՛ք սորա դռան դէմ.  
Եւ հօրս ասէք, որ ես էլ տուն չեմ դառնայ.  
Սիրակարօտ այսուեղ նստիմ, կը սպասեմ,  
Մինչեւ որ ինձ այս աղջիկը մեղքանայ....»

Դ. Ե Ր Գ

I

Լեռան լանջին կայ հիմաւուրց  
Մի վաճիք մամուս, վլատակ.  
Հաւաքւել են առաւօսուց  
Սարւորները նորա տակ:

Վարդավառի տօնն է այսօր,  
Քողիք են կապել սարւորներ.  
Զի կը խաղցնեն վաճիքի բոլոր  
Զէճիք ու զարդով կտրիներ:

Սարւոր կանայք խոտով-ցախով  
Բորբոքել են վատ օնախ.  
Համով-հոտով, օրհնած աղով  
Կ'եփեն ուխտած, սուրբ մատաղ:

VII

Ուսիս վրայ գլուխն յենած  
Զարօս մո՛ւշ-մո՛ւշ կը ֆնի.  
Ու հէֆեաքս էլ կիսատ մնաց,  
Սիրու հէֆեաքը վերջ չ'ունի...

## II

Ընկեր-տղերք սէզի վրայ  
Ուրախ սեղան են նստած,  
Կարմիր գինին կը հուրիրայ,  
Կը թշրժայ խորոված:

Ու սարն ՚ի վեր ձէնն է ձգել  
Զուռնան՝ բանձրիկ ու հզօր.  
Դաւուն ահեղ՝ ժաժք է ձգել,  
Թինդ ու դղորդ սար ու ձոր:

Ու մի կտրին քռաւ տեղէն  
Որոտալի ծափերի մէջ.  
Խենք տըրմէլին սկսաւ մէկէն,  
Պարեց, պարեց ու չը յոգնեց:

## III

Դադար կ'առնի դաւուլ-զուռնան,  
Ու փողն անո՛ւշ կ'հեծկլտայ.  
Ինչպէս ժաղած վարդի վրան  
Բլրուկն անյոյս լաց կուլայ:

Ու մի տղայ՝ կրծքի վրայ  
Սիրով զարկւած գլուխը կախ՝  
Երազի մէջ, ասես, թէ՛ նա  
Երգեց մեղմիկ մի տխուր տաղ:

## ՏՂԱՅԻ ՏԱՐԱ

— «Սիրելի՛ս, մի հատիկ ես,  
Աշխարքի մէջ մի հատիկ ես.  
Ես մեռնիմ — քեզի մատաղ,  
Դուն ծաղկի՛ր, — մի հատիկ ես:

Նագելի՛ս, ի՞նչ մեղք ունիմ.  
Հոգիս ելաւ, ի՞նչ մեղք ունիմ.  
Աչքս տեսաւ — սիրտս սիրեց,  
Նագելի՛ս, ի՞նչ մեղք ունիմ:

Սիրելի՛ս, մի արունիք է,  
Մի կեանիք կորես — մի արունիք է.  
Թէ մի մատաղ սրտիկ կոտրես,  
Սիրելի՛ս, եօթն արունիք է:

Այս, աղջիկ, արտի միջին,  
Զա՞ն աղջիկ, վարդի միջին.  
Եօթ տարի քեզ սիրել եմ  
Սրտիս սեւ դարդի միջին»:

Արագածը իրար վրայ  
Իր պերն գորգերն է փռել.  
Պերն գորգերով քար ու քռայ  
Քէօշֆերի պէս զար-զութել:

Վառ վարդերի տօնն է այսօր,  
Հարս ու աղջիկ զարդարուն՝  
Պտոյտ կուգան օրօր-սորոր  
Վարդափթիք լանջերում:

Ու աղաւնի կը քոցնեն  
Չիւների պէս սպիտակ.  
Իրար վրայ ջուր կը ցանեն  
Աղբիւներէն անապակ:

Նազիկ-հաւֆերն ան՛ւշ կ'երգեն,—  
Ո՞վ կ'իմանայ էդ լեզուն.—  
Ով լացել է սիրու վէրքէն  
Թռչուն դառել երազում:

Աղջիկները փունջ կը հիւսեն  
Ալ վարդերով՝ շաղերով.  
Իրենց սրտի սէրը կ'ասեն  
Հուր-հաւֆերի տաղերով:

ԱՂՋԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

«Սարի սրին ձիւն կը շողայ, —  
Սիրտս էրւեց քու սէրէն.  
Սարերն ելնեմ, կարօտ տղա՛յ,  
Էրւած սրտիս ձիւն թերեմ:

Բարեւ տարե՛ք, ծաղկի հովե՛ր,  
Հեռո՛ւ, հեռո՛ւ էն տղին,  
Տարի բոլոր քեզ չեմ տեսեր,  
Մեռնիմ ես քո տեսնողին:

Ա՛խ, երանի զմրուխտ քոչուն,  
Զմրուխտ երազ լինէի,  
Թովոայի բարձիդ, անքուն,  
Աչքերդ անուշ պագնէի»:

Վանիքի դռան՝ զով շւաֆին,  
Նստել է կոյր մի աշուղ.  
Զրոյց կ'անէ սազը կրծքին,  
Սազը կուլայ սրտաբուխ:

ԱՇՈՒՂԻ ԶՐՈՅՑԸ

— «Քերձի վրայ կար մի բերդ,  
Էն բերդի մէջ մի աղջիկ.  
Ինքը՝ հրաշք-գեղեցիկ,  
Սիրտը՝ կարծր քարի փերք:

Ով որ անցաւ էս դէհով  
Էդ գեղեցկի ոտքն ընկաւ.  
Սիրե՛ց, սիրե՛ց ու մեռաւ,  
Վառւած սիրու հրդեհով:

Եկա՞ն, եկա՞ն կարօտով,  
Եկողն էլ ետ չ'դառաւ,  
Ու ո՛չ մէկն էլ սէր չ'առաւ.  
Աւա՞դ, մեռան կարօտն'վ :

Ու մի կտրին խթեց ձին,  
Անցաւ մի օր էդ քերդով,  
Անցաւ հպարտ, անվրդով  
Ու չ'նայեց գեղեցկին :

Աղջիկը նրան ձայն տւեց,  
Կանչեց, լացեց, որ ետ զար.  
Ու երբ չ'եկաւ, խելագար,  
Բուրգէն իրան վար նետեց :

Քերձի վրայ կար մի քերդ,  
Էն քերդի մէջ մի աղջիկ.  
Ինչը՝ հրաշք-գեղեցիկ,  
Սիրոլ՝ ֆիփուշ վարդի քերը» :

VIII

Վաճիքի առաջ աղջիկ-տղայ  
Պար են բռնել, կը բռնին.  
Ու մի աղջիկ, ու մի տղայ  
Սիրու խօսքով կը կուին :

Պարողները՝ ուրախ-զւարք  
Նրանց վէնին ծոր կուտան.  
Ու կրծքերին՝ ծաղիկ ու վարդ՝  
Պար կը դառնան, ծափ կուտան :

## IX

ՊԱՐԵՐԳԱ

ՏՂԱՆ.— Այս սիրուն աղջիկ,  
Դրախտի ծաղիկ,  
Դուրս արի, տեսնեմ  
Տեսիդ լսելառն եմ:

ԽՈՒՄԲԸԼ.— Զան վարդավառ,  
Վարդավառ.  
Մեր դունը,  
Ոսկի ծառ:

ԱՂՋԻԿԸ.— Այ լսելառ տղայ,  
Վարդերի վրայ  
Խոկի չե՞ս քնիլ,  
Երազ չե՞ս տեսել:

ԽՈՒՄԲԸԼ.— Զան վարդավառ,  
Վարդավառ,  
Ոսկի բլբուլ  
Վարդին՝ քառ:

ՏՂԱՆ.— Այ երազ-աղջիկ,  
Դրախտի ծաղիկ,  
Մի պաշ տուր ինձի  
Ծարաւ եմ քեզի:

ԽՈՒՄԲԸԼ.— Զան վարդավառ,  
Վարդավառ,  
Վարդ եմ քաղել  
Քեզ համար:

իմ սիրեկան ԶԱՐՈՅԻՆ

Սարի գիշե՛ր, սիրուն գիշե՛ր,  
Մեղք կ'իջնի աստղերէն.  
Երազներով եկան հովեր  
Հեռո՛ւ, անյայտ տեղերէն:

Ծի՛ւ-ծի՛ւ հաւֆեր կտուց՝ կտցի,  
Ծաղկունիքի մէջ բուն մտան.  
Հաւֆերի պէս ե՛կ, ծոց ծոցի,  
իմ հազար սկր-սիրեկան,  
Խմենիք երկնի մեղրագինին,  
Ծաղկունիքի մէջ բուն մտնենի,  
Լուռ նայելով վառ աստղերին՝  
Աստղերի մէջ բուն մտնենի:  
Իրաք գրկած՝ ես ու դուն՝  
Երազներով հովերու,  
Յաւէրժ քոչինիք ես ու դուն՝  
Աստղերէն ասող, ու հեռո՛ւ...

ԱՂՋԻԿԸ.— Ա'յ ծարաւ տղայ,  
Գիշեր լուսնկայ  
Բլբուլի երգով  
Չե՞ս հարբել գինով:

ԽՈՒՄԲԸ.— Զա՛ն Վարդավառ,  
Վարդավառ,  
Թէ տղայ ես,  
Արի, տա՛ր...

Պարողները՝ պայծառ, ուրախ՝  
Խաղ կը կանչեն, կը խաղան.  
Սէր ու համբոյր, ծափ ու ծիծաղ,  
Ու մինչեւ լոյս կը խաղան:

## II

## Ե. ԵՐԳ

## I

Ամպն է կախել շուրջը տրտում,  
Ի՞նչ խաւար է էս գիշեր.  
Մէկը կուց-կուց իմ խեղն սրտում  
Սրուն կուլայ էս գիշեր:

Անգուք վարդը ծոցն է գոցել,  
Փուշն է բացել էս գիշեր.  
Խեղն բլրուկի սիրտն է խոցել,  
Սրուն կուլայ էս գիշեր:

Ու էս գիշեր աստղ մի պայծառ  
Տխուր կանչեց, վար ընկաւ.  
Ա՛խ, էն սիրուն աստղն էր պայծառ  
Սրտիս երկնուց վար ընկաւ...

Շող-շափաղին եկայ, կանգնայ  
Իմ ջարօյի դռան դեմ.  
Դուռն էր գոցած, ու ձեն տւի.  
Զէնիս վրայ չ'առայ ձեն:

Ուն ու գառներն ինձ որ տեսան՝  
Տխուր ձենով մայեցին.  
Արդեօֆ ցաւս դուք իմացա՞ֆ,  
Զա՞ն, չա՞ն, մեռնիմ ձեր լացին:

Ասէֆ Զարօխն՝ դուռը բանայ,  
Սիրտս ընկաւ ցաւ ու ցեց.  
Գիշերս գէշ երազ տեսայ,  
Տեսայ սէրս սուգի մէջ...

## III

Երազիս մէջ լինը տեսայ՝  
Ուկի ալիք ցոլալիս,  
Մի տղի հետ եարիս տեսայ՝  
Ուկի նաւով ման գալիս:

Եարս կրծքին՝ ծաղկունիք ունէր,  
Վարդը նրան նւիրեց.  
Արդեօֆ չըլնի՞՝, օրօր հովե՛ր,  
Եարս սիրու խօսիք տւեց:

Տղան մարգրիս մանեակ ունէր՝  
Եարիս վզէն կախ արաւ.  
Արդեօֆ չըլնի՞՝, շորոր հովե՛ր,  
Իմ եղնիկին եար արաւ:

Եարս նրա գրկում տեսայ՝  
Համբոյր կ'առնէր ու կուտար.  
Ա՛յս, ինձ ափին մեռած տեսայ՝  
Ուռին վրաս լուռ կուլար...

## IV

Կամազինել եմ մոլոր՝ քողիկիդ առջեւ,  
Շւաքիդ մատաղ, դուռդ բաց արա,  
Մէկ շողքդ տեսնեմ, դուն իմ վառ արեւ,  
Աշխարհը սեւցաւ իմ գլխի վրայ:

Սիրսու այրւած աչերիդ հրով,  
Մի կաթիլ ջուր տո՛ւր պապաֆ շրթունքիս.  
Սիրսու զարկւած ունիքերիդ քրով,  
Մի կտոր դեղ տո՛ւր անդարման վերքիս:

Երկնիքի սմալը իր լեռը ունի,  
Հանգստի մի այր նամբորդող քամին.  
Ուր տանիմ, ասա՛, խեղն սէրս հիմի,  
Դուռդ բաց արա՛, — մեռնիմ քու շէմին...

## V

Սիրտս կ'այրի արեւի պէս  
Անգուք, դաժան քու սիրով,  
Ու կը մղէ ինձ դեպի քեզ  
Մի դեւ հզօր ձեռներով։

Հասակդ՝ սօս, քայլւածքդ՝ սէզ,  
Քեզ կը սիրեմ բիւր անզամ.  
Թող համբուրեմ մազերդ մէկ-մէկ,  
Մէջքիդ բոլոր փաթուք գամ։

Կարօտդ ինձ խենք դարձրաւ,  
Փոք-որկի պէս խելագար.  
Խենք բոցերում ես ծով-ծարաւ՝  
Կը քափառիմ սար ու քար։

Ա՛յս, ես կ'այրիմ արեւի պէս,  
Հուր ու կրակ եմ անշէջ.  
Թո՞ղ ծոցիդ մէջ հոգիս տամ ես,  
Սէրս քամեմ հոգուդ մէջ…

Դուն, իմ դահին, դուն իմ օրհա՛ս,  
Դուն իմ ահեղ հրեշտա՛կ.  
Ե՛լ մահւան պէս կանգնի՛ր վրաս,  
Ճմլի՛ր սիրտս ոտքիդ տակ…

Վ Ե Ր Զ-Ե Ր Գ

VI

Սրտիս մէջէն սէրդ տարար,  
Տեղը խորութիկ վէրք մնաց,  
Խորութիկ վէրքս թողիր աննար,  
Ինձ ո՞ւմ թողիր, ո՞ւր կ'երթաս:

Գերեզմանս գէք փորէիր  
Վէրքիս նման՝ խորն, անտակ.  
Քու ձեռներով ինձ թաղէիր  
Լնի ափին, ծառի տակ.—  
Ինձ թաղէիր շատ խորն ու մուք,  
Նոր երթայի՛ր, է՛յ անգուք...

---

Ով կեանիք ունի, դարդ էլ ունի,  
Դարդին դարման եար էլ ունի.  
Մենակ ես եմ անբախտ ծնւել,  
Սիրտս դարդու ու նար չունի:

Ով սէր ունի, եար էլ ունի,  
Նազան սրտում տեղ էլ ունի,  
Մենակ ես եմ սեւօր ծնւել,  
Սէրս կուլայ ու բոյն չունի...

---

Ծէգը առաւ դար ու դուրան,  
— Ազիզ մէրի՛կ, դուռը բա՛ց,  
Քու որդին եմ, խոցւած կուզամ,  
Անո՛ւշ մէրի՛կ, գիրկդ բա՛ց...

ԳԱԻԱՌԱԲԱՌԵՐ  
(ԵՒ ՕՏԱՐ ԲԱՌԵՐ)

Թելիկ-մելիկ=Մեթեւեթուն.  
Ծլվան=Ծլվուն.  
Մանրաշ=Արագած Լեռան ճէջ մի լայնանիստ ճո-  
րահովիս  
Մրմուռ=Կոկիծ, կոկծալի.  
Եար=Սկրեկան, սկրուճի, սկրած.  
Դարդ=Վիշտ, ցաւ.  
Սինալ-հաւք=Առասպելական թռչուն.  
Զառ=Ոսկի, ոսկեղչն.  
Սազ=Նւագային գործիք.  
Ալմաստ=Աղամանդ.  
Աբրիչում=Մետաքս  
Լալ=Անդին քար.  
Մարչան=Բուսս.  
Նանիկ=Օրօրոցի երդ.  
Լաւած=Երկարուն, բարակ հաց.  
Հարհանդ-մարմանդ=Մեղմ, անդորր.  
Քողիկ=Հիւղ, տաղաւար.  
Ծէքծէքուն=Մեթեւեթուն.  
Շափաղ=Լոյս, ցուք, արտացոլում.  
Ալ=Կարմիր.  
Շարմաղ=Նուրբ, նուրբ ճորթով երևս.  
Շաղ=Ցող.  
Շաղվ=արտացոլում.  
Երդուք=Ցակինթ.

28.  
58 -  
36  
40  
41

Հալազար=Գոհար ու սոկեր .  
Հեյ շան հա շան=Հիացական , ողեւորւած ձայնար-  
կութիւն .  
Սուսան=Դալար .  
Շաղաղ=Յօղաթուրմ .  
Քոյայ=Խիճ , մանր քար .  
Նազան=Նազելի .  
Գում անել=Ժողովել , հաւաքել .  
Փէրի=Յաւէրժահարս .  
Հարօս=Հանգիստ թողած , չ'ցանած արտ .  
Սոսին-սոսին=Սէզերի ծփանքը , ալիքանման շար-  
ժումը .  
Տատիկ=Մեծ մայր . մամիկ .  
Լիս անել=Լսել , մտիկ անել .  
Պուկ գալ=Սուրհալ , վազել .  
Սարւոր=Լեռ մնացող (ամառանոց) գիւղացի .  
Քողֆ=Տաղաւար .  
Տըլնիկի=Կովկասում , մենակ-կենտ , կայտառ պար .  
Արունիֆ=Ոճիր . մարդասպանութիւն .  
Քէօսֆ=Ապարանիք .  
Սարի սուր , սրին=Ծայր , գագաթ .  
Զմրուխտ բռչուն=Առասպելական թռչուն .  
Շւաֆ=Մտել .  
Աշուղ=Գուսան .  
Քերծ=Քարաժայու , քարարլուր .  
Շող-շափաղ=Արշալոյս .  
Փարուր գալ=Փաթաթւիլ .  
Ծէզ=Ծագ , արեւածագ .  
Ազիզ=Անդին , սիրելի :

122

122 *points to figure in front of the group  
people. Figure. Figure in my  
preparation. Figure. Figure. Figure.*

1/3

ԳԻՆՆ է \$1.00

HAIRENIK PRESS - Boston, Mass.

ՀՀ Ազգային գրադարան



NL0342172

32987